«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

13 օգոստոսի, 2026 թվականի N 6-26-L

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՌԵԿՏՈՐԻ ԱՌԱՋԱՐԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 914-Ն որոշմամբ հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման կարգի» 4-րդ և 8.1-րդ կետերի պահանջները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 43-րդ կետի 19-րդ և ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.4-րդ կետի 18-րդ ենթակետերով՝ ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից վարձակալության նպատակով տրամադրվող տարածքների և այդ տարածքներում տեղադրվող սարքավորումների ցանկը՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված գույքի մի մասի՝ բուժկետի տարածքների վարձակալության տրամադրման վերաբերյալ հայտը՝ համաձայն Հավելված 2-ի, և այն սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ **Ս. Ռ. Պապիկյան**

ք. Երևան